ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 դեկտեմբերի 2025 թվականի N 72-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՐԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ 30 ԴՊՐՈՑ ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով, 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի ապրիլի 21-ի «Պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 595-Ն որոշմամբ հաստատված հավելված 3-ի 1-ին կետի 1-ին ենթակետը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար բնակավայրի 1-ին փողոց 30 դպրոց հասցեում գտնվող պետական գույքի անհատույց օգտագործման տրամադրման գործարար ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ (14)	**Դեմ՝ (0)**	**Ձեռնպահ՝ (1)**
ԴԱՆԻԵԼՅԱՆ		ՇԱԲՈՅԱՆ
ԽԱՉԱՏՐՅԱՆ		
ԿԱՐԱՊԵՏՅԱՆ		
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ		
ՀԱՅԿՅԱՆ		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Ձ.		
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Վ.		
ՄԱՆՈՒԿՅԱՆ Ա.		

ՄԱՆՈՒԿՅԱՆ Կ.

ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՄԵԼԻՔՅԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

«23» դեկտեմբերի 2025 թվականի
գյուղ Աշոցք

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Աշոցք համայնքի
ավագանու 2025 թվականի
դեկտեմբերի 23-ի N 72-Ա որոշման

ԳՈՐԾԱՐԱՐ ԾՐԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Ընդհանուր տեղեկություններ պետական սեփականություն հանդիսացող գույքը, այդ թվում՝ պետական կամ ենթակա պետական մարմիններին, ինչպես նաև կազմակերպություններին հանձնված (ամրացված) պետության սեփականությանը պատկանող հողամասերը (այսուհետ՝ տարածք) անհատույց օգտագործող՝ համայնքների, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների (այսուհետ՝ կազմակերպություն) մասին

1.1. կազմակերպության լրիվ անվանումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմ

1.2. կազմակերպության ձևը՝ Համայնքային կառավարչական հիմնարկ

1.3. կազմակերպության ստեղծման (վերակազմակերպման) ժամկետը՝ անժամկետ

1.4. կազմակերպության գրանցման վկայականի համարը՝ 01Բ1082764,

1.5. գրանցման վայրը և տարեթիվը՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1, 2016-10-31

1.6. գործունեության հիմնական ուղղությունները՝ Տեղական ինքնակատավարման մարմին,

1.7. գործունեության իրականացման վայրը (նստավայրը)՝ ՀՀ Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գ. Աշոցք, Հրապարակ 1,

1.8. փոստային հասցեն՝ 2801,

1.9. տվյալներ (հեռախոս/ֆաքս, էլեկտրոնային հասցե՝ 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru, վեբ կայքեր՝ https://ashotsq.am/,

1.10. կազմակերպության գործունեության զարգացման (այդ թվում՝ նաև գույքի բարելավման, եթե նախատեսվում է) ծրագիրը հաստատվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 72-Ա որոշմամբ,

1.11. կազմակերպության ղեկավար՝ համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյան, հեռ. +37477273788, կազմակերպության հաշվապահական ծառայության ղեկավար՝ Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Նաիրա Հարությունյան, հեռ. +37477010768 :

2. Կազմակերպության գործունեության համար հիմք հանդիսացող իրավական ակտերը և զարգացման ռազմավարական փաստաթղթերը (հաստատված ծրագրեր, ընդունված որոշումներ և այլն, եթե դրանք առկա են)

2.1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանը իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Տեղական ինքնակառավարման մասին»օրենքով, «Աշոցքի համայնքապետարան աշխատակազմ» կառավարչական հիմնարկի կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

2.2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանը իր գործունեության և ներկայացված ծրագրի իրականացման համար առաջնորդվում է՝ «ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի Կրասար բնակավայրում դպրոցի հին, չօգտագործվող մասնաշենքի վերանորոգում» ծրագրով, ՀՀ Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 45-Ա որոշմամբ (փաստաթղթերով):

2.3 Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ և այդ ոլորտը կանոնակարգող այլ իրավական ակտերով:

3. Կազմակերպության գործունեության ոլորտը

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցքի համայնքապետարանի գործունեության ոլորտներն է՝ տեղական ինքնակառավարման մարմին:

4. Ծրագրի իրականացման համար առկա մարդկային ռեսուրսներն են

4.1. Աշոցք համայնքի ղեկավար՝ Կարեն Մանուկյան,

Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Համլետ Ավետիսյան,

Աշխատակազմի գլխավոր մասնագետ (տնտեսական զարգացման պատասխանատու)՝ Թամարա Գյադուկյան:

4.2. Աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ՝ Արման Նալբանդյան,

Աշխատակազմի գլխավոր մասնագետ (գնումների համակարգող)՝ Էմմա Ղազարյան

4.3.Ծրագրին մասնակցելու են աշխատակազմի տնտեսական սպասարկում իրականացնող անձինք :

5. Կազմակերպության կողմից տարածքի օգտագործման ծրագրի նպատակը և խնդիրները

5.1 սույն ծրագրի իրականացման նպատակը հանդիսանում է՝

1) Կրասար բնակավայրում տեղական ինքնակառավամն մարմնի գործունեության լիարժեք ապահովում՝ վարչական ղեկավարի նստավայրի կառուցում,

2) բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավվում՝ երտասարդական կենտրուն, գրադարան, շախմատի, պարի խմբակներ, խաղասենյակ,

3) անհրաժեշտ կոմունիկացիաներով և գույքով ապահովված համայնքային կենտրոնի հիմնում (հանրային և մշակութային միջոցառումների դահլիճ):

5.2. սույն ծրագրի իրականացման ընթացքում լուծման ենթակա խնդիրներ են՝

1) Աշոցք համայնքի Կրասար բնակավայրում չկա անհրաժեշտ շինություն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության լիարժեք ապահովման, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման համար,

2) բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը տեղակայված է վագոն-տնակում,

3) խնդիրներ են առաջանում տարբեր հարցերի հանրային քննարկումների, մշակութային միջոցառումների, կազմակերպման գործում

4) երկարատև ձմռան պայմաններում բնակիչները զրկված են հանգստի, ժամանցի անցկացման հնարավորություններից և այլն:

6. Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրները

6.1. Սույն ծրագրի իրականացման համար առաջիկա մեկ տարվա համար կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի ֆինանսավորման ընդհանուր մեծությունը կազմում է 7 000 000 ՀՀդրամ:

6.2. սույն ծրագրի ֆինանսավորման աղբյուրներն են Աշոցքի համայնքապետարանիմիջոցները:

7. Ծրագրի իրականացման և տարածքի օգտագործման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 1 տարվա ընթացքում:

8. Ծրագրի իրականացման համար նախատեսվող միջոցառումները

8.1. սույն ծրագրի շրջանակներում առաջիկա մեկ տարվա ընթացքում Աշոցքի համայնքապետարանը նախատեսում է իրականացնել հետևյալ միջոցառումները (այդ թվում՝ տարածքի բարելավման ուղղությամբ, եթե ծրագրով նախատեսվում է)

Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) ստանալու համար հայտի կազմում և ներկայացում,

Նախագծանախահաշվային փաստաթղթերի պատվիրում,

Նորոգման աշխատանքների կատարման, գույքի ձեռքբերման նպատակով գնման գործընթացների կազմակերպում, դրանց արդյունքում հաղթած կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում,

Կառուցապատողին շինարարության թույլտվության տրամադրում,

Նորոգման աշխատանքների իրականացում,

Շահագործման թույլտվություն (նորոգված մասնաշենքի շահագործման փաստագրում):

8.2. սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում նախատեսվում է, որ ընդհանուր շահառուներ կդառնան բնակավայրի բոլոր բնակիչները (496 մարդ), ուղղակի շահառուները՝ տարվա կտրվածքով 300-350 մարդ,

Միաժամանակ ծրագրի հաջող իրականացումը կարևոր ներդրում կլինի համայնքում տեղական ինքնակառավարման արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեղխնիկական բազայի ստեղծման, ամրապնդման ու բարելավման, տեղական ինքնակառավարման գործընթացում բնակչիների լայն ներգրավման գործում:

8.3. ծրագրի իրականացման ընթացքում իրականացվող բաժանելի բարելավումները (ձեռք բերվող գույքը) չեն համարվում տարածքի բարելավմանն ուղղված միջոցներ և համարվում են կազմակերպության սեփականությունը:

9. Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքը

սույն ծրագրով նախատեսված միջոցառումների արդյունքում ակնկալվում է, որ կազմակերպությունը ծրագրային ժամանակահատվածում (հնարավորության դեպքում՝ ըստ տարիների) կապահովի տեղական ինքնակառավարման անշեղ իրականացումը, բնակավայրի բնակիչների համար կստեղծի պայմաններ՝ ժամանց կազմակերպելու համար, կբացվեն երիտասարդական կենտրոն և խմբակներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ**